

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱՆՁԱՏՈՒՄԸ՝
ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍԿՁԲՈՒՆՔ

Բազրատ Ղազինյան՝

Արդի սահմանադրագիտության մեջ սահմանադրական սկզբունքները բնորոշվում են որպես կոնկրետ պետությունների սահմանադրություններում ամրագրված հիմնարար և ելակետային դրույթներ, որոնք պայմանավորում են սահմանադրաիրավական կարգավորման առարկա հանդիսացող հասարակական հարաբերությունների բովանդակությունը: Սահմանադրական սկզբունքները կարող են վերաբերել ինչպես պետության ամբողջ սահմանադրական կարգին, այնպես էլ նրա առանձին ինստիտուտներին, ինչպիսիք են քաղաքական համակարգը, մարդու և քաղաքացու սահմանադրաիրավական կարգավիճակը, պետության տարածքային կազմակերպումը և այլն: Դրանցով է մեծապես պայմանավորված սահմանադրության բովանդակությունը¹:

Սահմանադրական սկզբունքների յուրօրինակ դասակարգում է առաջարկում Է.Կուրիսը: Նրա կարծիքով՝ սահմանադրական սկզբունքների տիպաբանությունը կարելի է իրականացնել՝ ելնելով այն հանգամանքից, թե ինչպես են նրանք արտահայտված սահմանադրության մեջ, ըստ որի՝ առանձնացվում են *առաջնային*, *համալիր (բարդ)* և *ածանցյալ* սկզբունքներ: Առաջնային սկզբունքները՝ *expressis verbis*², արտահայտված են սահմանադրության տեքստում և որևէ լրացուցիչ մեկնաբանման կարիք չունեն, քանի որ այստեղ գործում է *clarus non sunt interpretanda*³ բանաձևը:

¹ ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմի իրավախորհրդատվական վարչության փորձագիտական-վերլուծական բաժնի գլխավոր մասնագետ, ի.գ.թ.:

² <http://dic.academic.ru/dic.nsf/lower/15564>

³ Լատիներենից թարգմանաբար՝ ուղղակիորեն, ակնհայտ:

⁴ Լատիներենից թարգմանաբար՝ ակնհայտը մեկնաբանման կարիք չունի:

Ի տարբերություն առաջնայինի՝ համալիր սահմանադրական սկզբունքները բխեցվում են մի շարք սահմանադրական դրույթների մեկնաբանությունից: Իսկ ածանցյալ սահմանադրական սկզբունքներն ուղղակիորեն նախատեսված չեն սահմանադրությամբ, սակայն ձևավորվում են սահմանադրական դատարանի կողմից սահմանադրության մեկնաբանման արդյունքում՝ բխեցվելով առաջնային կամ համալիր սահմանադրական սկզբունքներից՝ վերջիններիս բովանդակության համակարգային մեկնաբանմամբ [1, շ. 70-71]: Վերլուծելով և համադրելով հիշյալ դասակարգման հիմքում ընկած հիմնական բնութագրիչները՝ գտնում ենք, որ սահմանադրական սկզբունքների պարագայում վերջիններիս սահմանադրաիրավական ամրագրումը չի կարող ազդեցություն ունենալ նրա իրավական և քաղաքական նշանակության վրա: Դրանք, ինքնին, դարերի քննությունն անցած և հասարակության արժեքային համակարգով պայմանավորված հիմնարար անանց արժեքներ են, որոնք ընկած են հասարակական համաձայնության հիման վրա վարքագծի հիմնարար կանոնների սահմանման և կենսագործման հիմքում, որոնց գոյությունը որևէ կերպ չի կարող կասկածի տակ դրվել սահմանադրի կամ օրենսդրի համապատասխան կամարտահայտությունից: Այս պարագայում իրեն իրավական հռչակող ցանկացած պետության համար իշխանությունների տարանջատումը եղել և շարունակում է մնալ որպես հիմնարար սահմանադրական սկզբունք՝ ժամանակին համընթաց ձեռք բերելով նոր իմաստ և բովանդակություն:

Իշխանությունների տարանջատումը յուրաքանչյուր երկրի սահմանադրական լուծումների համար ունի հիմնաքարային նշանակություն: Այն, ինչպես արդարացիորեն նշում է Ա.Բլանկենագելը, նոր և նորագույն ժամանակներում պետության սահմանադրական զարգացման հիմնական ձեռքբերումներից է [2, շ. 256]: Այս սկզբունքի էությունն այն է, որ դրանով առաջադրվում է պետական իշխանության սահմանափակման գաղափարը՝ դրա տարանջատված թևերի փոխադարձ զսպման և հակակշռման միջոցով, ինչի շնորհիվ հաղթահարվում է իշխանության կենտրոնացման վտանգը, ինչպես նաև անհրաժեշտ երաշխիքներ են ստեղծվում մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների իրացման ու

պաշտպանության, իրավական պետության և ժողովրդավարության ամրապնդման համար: Գ.Գ. Հարությունյանը, այս սկզբունքին տալով հիմնարար նշանակություն, գտնում է, որ հասարակության նորմալ զարգացման համար անհրաժեշտ է ամենից առաջ կազմավորել պետական իշխանության գործուն համակարգ՝ օրենսդիր, գործադիր և դատական թևերի հստակ տարանջատմամբ և դրանց ներդաշնակ ու արդյունավետ աշխատանքի ապահովման նպատակով զսպումների և հակակշիռների համակարգի կիրառմամբ [3, էջ 4]: Օ.Պֆերսմանի կարծիքով՝ իշխանությունների տարանջատում եզրույթը բնութագրում է, վերջին հաշվով, երեք օբյեկտ: Դրանք են՝ քաղաքական տեսությունը, որոշ իրավական համակարգերում գոյություն ունեցող նորմատիվ կառուցվածքը և իրավունքի տեսությանը վերաբերող այն հայեցակարգը, որը թույլ է տալիս վերլուծել որոշ իրավական համակարգերում առկա գործառույթների բաշխման նորմատիվ կառուցակարգերը [4, c. 44]:

Ինքնին, իշխանությունների տարանջատման գաղափարն ուղեկցում է մարդկությանը դարեր շարունակվող իդեալական պետության որոնումներում: Սաղմնային վիճակում այն գոյություն ուներ դեռևս հին հունական փիլիսոփաների հայացքներում: Սակայն նրա հաստատումը՝ որպես ժողովրդավարական և իրավական պետության մասին ուսմունքի բաղկացուցիչ մաս և ամբողջական տեսություն, իր դասական և ավարտուն մեկնաբանմամբ արտացոլվել է Շառլ Լուի Մոնտեսքյոյի (1689-1755թթ.) աշխատություններում:

Իր «Օրենքների ոգու մասին» հիմնարար աշխատության մեջ Մոնտեսքյոն հետևյալ կերպ է արտահայտել իշխանությունների տարանջատման էությունը. «Եթե օրենսդիր և գործադիր իշխանությունները միացած լինեն մեկ անձի կամ հաստատության մեջ, ապա ազատություն չի լինի, քանզի կարելի է երկյուղել, որ այդ միապետը կամ սենատը կարող են հրապարակել բռնակալական օրենքներ և նույն կերպ դրանք կիրառել: Ազատություն չի լինի նաև այն դեպքում, եթե դատական իշխանությունը չառանձնացվի օրենսդիր և գործադիր իշխանություններից: Եթե այն միացած լինի օրենսդիր իշխանությանը, ապա քաղաքացիների կյանքը և ազա-

տությունը կդառնան կամայականությունների գերին, քանզի դատավորը կդառնա օրենսդիր: Եթե դատական իշխանությունը միանա գործադիր իշխանությանը, ապա դատավորը հնարավորություն է ստանում դառնալ բռնակալ» [5, շ. 290]:

Միջազգային սահմանադրական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ ներկայումս ժամանակակից աշխարհում ձևավորվել են դիտարկվող սկզբունքի կիրառման երկու մոդելներ՝ «ճկուն» և «կոշտ»: Վերոնշյալ մոդելներից առաջինը՝ իշխանությունների «ճկուն» տարանջատումը, հիմնվում է օրենսդիր իշխանության գերակայությամբ իշխանությունների գործակցության վերաբերյալ Ջոն Լոքի գաղափարների վրա, իսկ երկրորդ՝ «կոշտ» մոդելը հիմնված է իշխանությունների հավասարակշռության և առավել հստակ տարանջատման վերաբերյալ Շառլ Լուի Մոնտեսքյոյի մեկնաբանությունների վրա: Եվրոպական սահմանադրական և քաղաքական պրակտիկան հենվում է թե՛ մեկ, թե՛ մյուս մոդելի վրա, իսկ երկրորդ մոդելի կիրառման առավել դասական օրինակը կարելի է տեսնել ԱՄՆ-ում: Նշված մոդելներից յուրաքանչյուրը գործում է որոշակի պայմաններում: Այդ պայմաններն են հասարակության քաղաքական մշակույթը, քաղաքական ինստիտուտների կայացման աստիճանը, իրավական ավանդույթները, մտածելակերպը և հոգեբանությունը, իրավագիտակցության մակարդակը, իշխանության տարբեր ճյուղերի զարգացման միտվածությունը, նրանց գործառությանը և կառուցվածքային զարգացումների դիալեկտիկան և այլն [6, էջ 203-204]:

Իշխանությունների տարանջատումը, առանց որի անհնար է պատկերացնել իրավական պետությունը, միևնույն ժամանակ առաջ է քաշում անհրաժեշտ իրավական կառուցակարգերի գործադրման միջոցով պետական տարբեր մարմինների միջև սահմանադրորեն ամրագրված փոխհարաբերությունների հավասարակշռության պահպանման և դրանց կայուն զարգացման խնդիր, որտեղ սկզբունքային նշանակություն է վերապահվում զսպումների և հակակշիռների համակարգին, քանի որ դրա կիրառման արդյունքում իշխանությունների «ստատիկ» տարանջատմանը հաղորդվում է «դինամիկ» բնույթ [7, շ. 9]: Հակակշիռների և զսպումների հա-

մակարգի ոչ արդյունավետ գործադրումն ու տարանջատված իշխանությունների միայն ստատիկ հավասարակշռության հաստատումն անխուսափելիորեն հանգեցնելու են իշխանության կաթվածահարման և ճգնաժամի [8, c. 13-16]:

Այս առումով, կարծում ենք, դասական է ԱՄՆ օրինակը: ԱՄՆ Սահմանադրության համաձայն՝ նախագահը չի կարող արձակել Կոնգրեսը, իսկ Կոնգրեսն, իր հերթին, չի կարող պաշտոնանկ անել նախագահին և նրա ղեկավարությամբ գործող նախարարներին՝ բացառությամբ իմփիչմենթի դեպքերի: Հանրապետության նախագահը կարող է վերադարձնել Կոնգրեսի կողմից ընդունված օրենքը՝ կիրառելով իր հետաձգող արգելանքը (վետոն), սակայն ԱՄՆ Կոնգրեսն, իր հերթին, կարող է հաղթահարել այն ձայների ընդհանուր թվի 2/3-րդով: ԱՄՆ Կոնգրեսը սահմանադրորեն որևէ իրավասություն չունի անվստահություն հայտնել նախարարներին, և չի կարող նրանց պաշտոնանկ անել այդ ճանապարհով, սակայն վերջիններիս նշանակումն ԱՄՆ նախագահի կողմից կատարվում է բացառապես Սենատի հաստատումից հետո: Պետական մարմինների գործունեության սահմանադրականության նկատմամբ վերահսկողության իրավասությունը վերապահված է դատական իշխանությանը, ինչը վերջնականապես ավարտին հասցվեց դատարանների (վերջին հաշվով՝ ԱՄՆ Գերագույն դատարանի)՝ Կոնգրեսի կողմից ընդունված օրենքները Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու իրավասության վերաբերյալ 1803թ. դատական ակտի ընդունմամբ, սակայն, ինքնին, ԱՄՆ Գերագույն դատարանի դատավորների նշանակումը հանրապետության նախագահի կողմից կատարվում է Սենատի համաձայնությամբ [9, c. 241]:

Միջազգային սահմանադրական պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ իշխանությունների տարանջատման և գործառնական հավասարակշռության ապահովման խնդիրն առավել դժվար է լուծել հատկապես կառավարման կիսանախագահական համակարգերում, որտեղ սահմանադրական լիազորությունների հարցերով վեճերն առավել հաճախ և սուր են դրսևորվում: Կիսանախագահական համակարգի բնութագրիչն այն է, որ կառավարության և խորհրդարանի միջև սկզբունքային վեճի դեպքում ոչ

միայն խորհրդարանը կարող է անվստահություն հայտնել կառավարությանը, այլև նախագահը կարող է լուծարել խորհրդարանը: Միաժամանակ, միջազգային սահմանադրական զարգացումների փորձը վկայում է, որ նման համակարգերում, անկախ դրանց բարդության աստիճանից, նույնպես գտնվել են հիշյալ հիմնախնդրի արդյունավետ լուծումներ: Ելակետային այստեղ իշխանության յուրաքանչյուր թևի գործառնական, զսպող և հակակշռող լիազորությունների շրջանակի ճշգրտումն ու ներդաշնակեցումն է այն հաշվով, որ մի կողմից ապահովվի իշխանության յուրաքանչյուր թևի հարաբերականորեն անկախ և լիարժեք գործունեությունը՝ չխաթարելով «գործառույթ - ինստիտուտ - իրավասություն» համակարգի հավասարակշռությունը, մյուս կողմից՝ անհրաժեշտ և բավարար հակակշիռների և զսպումների կիրառման շնորհիվ պահպանվի այդ ներդաշնակությունը դինամիկայում [6, էջ 196-197]: Կարծում ենք, որ տվյալ պարագայում առավել ընդունելի է Գ.Գ. Հարությունյանի մոտեցումը, ըստ որի՝ սահմանադրական հակակշիռը պետական իշխանության ինստիտուտի սահմանադրական, ո՛չ գործառնական բնույթի լիազորություն է՝ կոչված դինամիկայում պահպանելու իշխանությունների տարանջատման սահմանադրական հաշվեկշիռը: Իր հերթին, սահմանադրական զսպումը պետական իշխանության ինստիտուտի սահմանադրական ո՛չ գործառնական և ո՛չ հակակշռային բնույթի լիազորություն է՝ կոչված կանխելու իշխանությունների տարանջատման սահմանադրական հաշվեկշռի հնարավոր խախտումը՝ հակակշիռների համակարգի կողմից այն չապահովելու դեպքում [6, էջ 200-201]:

Արդի պետաիրավական զարգացումներին համընթաց՝ փորձ կատարվեց փոփոխել պետական իշխանության եռաթև համակարգը և արդեն իսկ առկա գործառնական համակարգի ֆորմալ «վերաբաշխումների» արդյունքում ստեղծել պետական իշխանության նոր թևեր, ինչպես, օրինակ, վերահսկողական իշխանությունը: Ընդ որում՝ հարկ է նկատել, որ այս իշխանության պարագայում շեշտադրվում է այն հանգամանքը, որ վերջինս իրականացնող պետական մարմինները չեն սահմանում վարքագծի ընդհանուր կանոններ, չեն զբաղվում կազմակերպական աշխատանքով, չեն քննում քրեական կամ քաղաքացիական կոնկրետ գործեր: Նրանց կողմից

վեր են հանվում իրավախախտումների կոնկրետ փաստեր, շեշտադրվում է առկա իրավիճակի շտկման անհրաժեշտությունը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հայտնվում է նաև համապատասխան մարմիններին ձեռնարկված միջոցառումների անբավարարության մասին: Որպես նման մարմիններ են մատնանշվում հիմնականում դատախազությունները, վերահսկողական գործառույթներով օժտված տարբեր խորհրդարանական ինստիտուտները և այլ պետական մարմիններ [10, շ. 258-260]: Մեր կարծիքով, պետական իշխանության տարանջատման դասական եռաթև համակարգում վերահսկողական իշխանության առանձնացումն, ըստ էության, կրում է արհեստական բնույթ, քանի որ պետական իշխանության յուրաքանչյուր թև, ինքնին, օժտված լինելով որոշակի հսկողական և վերահսկողական բնույթի լիազորություններով, օժտված է մյուս իշխանությունների ոչ իրավաչափ գործողություններին հակադրելու և պետական իշխանության խախտված հաշվեկշիռը վերականգնելու իրավական հնարավորությամբ:

Ժամանակակից մի շարք սահմանադրագետների, ի մասնավորի՝ Կ.Հեսսեի պնդմամբ, իշխանությունների տարանջատման սկզբունքի հիմնական բնութագրիչներն են մարդկանց համատեղ գործունեության կարգավորումը և կարգապահությունը, իշխանության առանձին թևերի սահմանումը, դրանց իրավագործության որոշումը և սահմանափակումը, ընդհանուր աշխատանքի կարգավորումը, պետական մարմինների իրավագործության հավասարակշռումը և արդյունքում՝ սահմանափակ պետական իշխանության միասնականությունը [11, շ. 237]: Այս տեսանկյունից դիտարկման առանձնահատկությունն այն է, որ դրանով չի բացարձակացվում իշխանությունների տարանջատման խնդիրը: Այն ենթադրում է նաև գործառնական հստակեցված և անկախ իրականացվող իրավասություններով օժտված միասնական պետական իշխանության տարբեր թևերի համագործակցություն և հավասարակշռություն¹: Մ.Վայլի մեկնաբանմամբ՝ իշխանություն-

¹ Իշխանությունների միաժամանակյա տարանջատման և համագործակցության անհրաժեշտության մասին գաղափարն ընդգծվում է նաև ԱՄՆ Գերագույն դատարանի դատական պրակտիկայում: Ուշագրավ է այս հարցի վերաբերյալ *United States v. Nixon, President of the United States, 418 US 683, 711 (1974)* գործով կայացված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ Սահմանադրությունը սահմանում է, որ իշխանության թևերը պետք է լինեն միաժամանակ միմյանցից տարանջատված և միմյանց հետ փոխկապակցված, լինեն ինքնավար և միմյանց հետ համագործակցող: http://caselaw.lp.findlaw.com/scripts/getcase.pl?court=US_vol=418_invol=683:

ների տարանջատումը չպետք է սահմանափակել պետական մարմինների փոխհարաբերությունների ֆորմալ-իրավաբանական հետազոտությամբ, այն պետք է դիտարկել նաև իրավական, սոցիալական և քաղաքական ողջ համակարգի համագործակցության, պետության և հասարակության միջև հավասարակշռության հաստատման տեսանկյունից [12, p. 1-10]:

Միջազգային սահմանադրական պրակտիկայում փորձ է արվում սահմանադրորեն սահմանել պետական իշխանության սահմանափակումները, ստեղծել իշխանությունների փոխկապվածության, գործողությունների համաձայնեցման կառուցակարգեր, ինչպես, օրինակ, խորհրդարանի կողմից կառավարության ծրագրի հաստատումը, նախագահի արգելանքի (վետոյի) իրավունքը, խորհրդարանի կողմից դրա հաղթահարման իրավունքը, խորհրդարանն արձակելու նախագահի իրավունքը և այլն [13, էջ 52-53]: Ինչ վերաբերում է պետական իշխանության թևերի միջև հավասարակշռության պահպանման խնդրին, ապա, մեր կարծիքով, այստեղ չափազանց կարևոր դերակատարում կարող է ունենալ սահմանադրական արդարադատության ընթացակարգով պետական իշխանության թևերի սահմանադրական լիազորությունների հաշվեկշռի խախտման բացահայտման, գնահատման և վերականգնման գործուն համակարգի առկայությունը:

Վ.Դ. Ջորկինի կարծիքով, իշխանությունների տարանջատման սկզբունքի կենսագործումը ոչ միայն իրավական, այլև քաղաքական բարդ հիմնախնդիր է: Այն մեծապես կախված է պետական իշխանության մարմինների՝ իրենց վերապահված լիազորությունները նշված սկզբունքի հիման վրա իրականացնելու, հակամարտությունների և կոնֆլիկտների առաջացումը չթույլատրելու, իսկ իրավասությունների հարցերով վեճերի դեպքում՝ դրանք սահմանադրական արդարադատության ընթացակարգով լուծելու պատրաստակամությունից՝ միաժամանակ պատրաստ լինելով կատարել սահմանադրական դատարանի որոշումը՝ անգամ այն դեպքում, եթե դատական ակտը կայացվել է ոչ իրենց օգտին: Պետական իշխանության մարմինների և ընդհանրապես հասարակության կարողունակությունը՝ ենթարկվել հանրապետության նախագահի, խորհրդարանի և կառավարության իրավասություններին առնչվող սահմանադրական դատա-

րանի որոշումներին, իշխանությունների տարանջատման սկզբունքի իրագործման անհրաժեշտ նախապայմաններից է: Հատկապես սահմանադրականության կայուն ավանդույթների բացակայությամբ աչքի ընկնող հասարակություններում իշխանությունների տարանջատման բնագավառում առաջացող կոնֆլիկտների կանխարգելման անհրաժեշտ պայմաններից է սահմանադրության կայունությունը և նրա կամ օրենսդրական նորմերում իշխանությունների տարանջատման սկզբունքի համակողմանի մարմնավորումը: Այստեղ խոսքը պետական իշխանության մարմինների իրավական կարգավիճակի, նրանց համագործակցության, փոխադարձ վերահսկողության, զսպումների և հակակշիռների համակարգի, ինչպես նաև սահմանադրաիրավական պատասխանատվության միջոցների ամրագրման անհրաժեշտության մասին է [14, c. 46-48]:

Իշխանությունների տարանջատումը նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմնարար սահմանադրական սկզբունքներից մեկն է: Այն առաջին անգամ ամրագրվել է «Հայաստանի անկախության մասին» 1990թ. օգոստոսի 23-ին ընդունված հռչակագրում, որի 9-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է... օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատում... [15, էջ 10]: Հետագայում նշված սկզբունքն ամրագրվեց ՀՀ Սահմանադրությամբ, որի 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա:

Ի տարբերություն նախկին խմբագրության՝ ներկայիս խմբագրմամբ ՀՀ Սահմանադրության մեջ հիշյալ իրավանորմի «տարանջատում» եզրույթը փոխարինվեց «բաժանում» հասկացությամբ: Մեր կարծիքով, վերջինս կիրառելի չէ սահմանադրական ճարտարապետության այս հիմնարար սկզբունքի նկատմամբ, քանի որ ժողովրդավարական և իրավական պետության պայմաններում պետական իշխանությունը, ունենալով միասնական աղբյուր և կրող, իրականացվելով տարբեր իրավական ձևերով և մեթոդներով՝ պետական ապարատի տարբեր օղակների կողմից, որևէ կերպ

չի կարող բաժանվել պետական իշխանության տարբեր ինստիտուտների միջև, քանի որ այն միասնական համակարգային ամբողջականություն է: Այստեղ խոսքը կարող է վերաբերել բացառապես պետական իշխանության գործառնական և դրա հիման վրա՝ համապատասխան համակարգային տարանջատման իրականացմանը՝ անհրաժեշտ իրավական երաշխիքների համակարգի կենսագործման միջոցով պետական իշխանության յուրաքանչյուր թևի անկախության ապահովման, զսպումների և հակակշիռների արդյունավետ համակարգի ստեղծման նպատակով, ինչը թույլ կտա բացառել ամբողջ պետական իշխանության կենտրոնացումը մեկ անձի կամ մեկ մարմնի ձեռքում՝ հակառակ դեպքում հավակնելով դառնալ անսահմանափակ և ամենագոր՝ լայն հնարավորություններ ունենալով հակասահմանադրական և հակաիրավական դրսևորումների համար:

Ինչպես արդարացիորեն նշել է Ժ.Գ. Ջհանգիրյանը. «Դժվար չէ նկատել, որ եթե *տարանջատել* բառի հիմնական իմաստը *տարազատումը*, *տարաբաժանումը* կամ *զանազանումն* է, ապա բաժանել բառի հիմնական իմաստը *մասնատելը*, *պառակտելը*, *բաշխելը*, *ցրելը*, *անջատելն* է: Եթե սրան ավելացնենք այն, թե ինչն է կիսվում, օտարվում, անջատվում, ապա ինքնին պարզ կդառնա, որ այն չի կարող վերագրվել իշխանությանը, քանի որ վերջինս կիսվել, օտարվել չի կարող, որովհետև իշխանության միակ կրողը և աղբյուրը ժողովուրդն է, որին բաժանել չի կարելի» [16, էջ 7]: Պետական իշխանության մարմինները, իրականացնելով իրենց լիազորությունները, անկախ բոլոր հանգամանքներից, փոխկապակցված են և կազմում են մեկ ամբողջական մեխանիզմ: Նրանց միջև ձևավորվել է սահմանադրորեն կարգավորվող փոխհարաբերությունների որոշակի համախումբ, առանց որի անհնարին է պետական իշխանության լիարժեք իրականացումը [17, c. 233]: Այս սկզբունքը պետք է մեկնաբանել որպես պետական իշխանության իրական գործոնների սահմանափակում, հավասարակշռում, դրանց համագործակցություն և փոխկապակցություն:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում ամրագրված «բաժանում» եզրույթը փոխարինել նախկին խմբագրման «տարանջատում» եզրույթով, որն առավել

ամբողջականորեն է արտահայտում այս սկզբունքի էությունը՝ որպես իրավական պետության հիմնարար սահմանադրական սկզբունք:

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում ամրագրվեց նաև իշխանությունների տարանջատման սկզբունքի բաղկացուցիչ մաս կազմող *հավասարակշռման* սկզբունքը, որն անխուսափելի անհրաժեշտություն է ժողովրդավարական կարգերի և իրավական պետության համար: Իշխանությունների տարանջատումը ենթադրում է դրանց հավասարակշռում, իսկ հավասարակշռությունը, հասկանալի է, չի կարող լինել այնպիսի իշխանությունների միջև, որոնք տարբեր կշիռ ունեն [18, շ. 106]: Տարբեր երկրների սահմանադրությունների ուսումնասիրությունը վկայում է, որ մի շարք դեպքերում շեշտադրումը կատարվում է ոչ թե իշխանությունների տարանջատման սկզբունքի ամրագրման, այլ իշխանությունների իրական տարանջատման, նրանց արդյունավետ համագործակցության ապահովման և այդ հայեցակարգային մոտեցումը հիմնական օրենքում ամրագրելու վրա: Օրինակ՝ ՌԴ Սահմանադրության 10-րդ հոդվածում ամրագրված է. «Ռուսաստանի Դաշնությունում պետական իշխանությունն իրականացվում է այն օրենսդիրի, գործադիրի և դատականի տարանջատելու հիման վրա: Օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններն ինքնուրույն են»:

Խոսելով իշխանությունների տարանջատման մասին՝ հարկ է նշել, որ վերջինիս արդյունավետ կենսագործման նախապայմաններից մեկը նաև պետական իշխանության մարմինների *իրավասության սահմանների ամրագրումն* է, որը պետական իշխանության ինքնասահմանափակման ամենաարդյունավետ եղանակներից է: Այստեղ, ի թիվս այլ գործոնների, կարևորվում է նաև վերջինիս պատշաճ նորմատիվ-իրավական հիմքը: Ուշագրավ է, որ սահմանադրաիրավական զարգացումների արդյունքում սահմանադիրն առավել հստակեցրեց հիշյալ խնդրի լուծումը և ամրագրեց, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են *Սահմանադրությամբ կամ օրենքներով*՝ ի տարբերություն նախկին խմբագրությամբ առկա *օրենսդրությամբ* բառի, որն

իր բովանդակային անլիարժեքության պատճառով իրավակիրառական պրակտիկայում ենթարկվում էր տարակերպ մեկնաբանությունների:

Մեր կարծիքով, հիշյալ սահմանադրական նորմի հիշատակված ձևակերպումն առավել ամբողջականորեն է արտահայտում այս հիմնարար սկզբունքի էությունը, քանի որ ժողովրդավարական և իրավական պետության պայմաններում միայն ժողովրդին և նրա անմիջական մասնակցությամբ կազմավորվող օրենսդիր իշխանությանն է վերապահված ինչպես մարդկանց, այնպես էլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց համար վարքագծի կանոններ սահմանելու իրավասությունը:

ՀՀ Սահմանադրության ինչպես նախկին, այնպես էլ ներկայիս խմբագրությունների ուսումնասիրությունը վկայում է, որ վերջիններիս 4-րդ, 5-րդ և 6-րդ գլուխների վերտառությունները չեն արտացոլում նրա՝ 5-րդ հոդվածում ամրագրված պետական իշխանության համակարգը, քանի որ պետական իշխանության թևերի վերաբերյալ վերոնշյալ գլուխները համապատասխանաբար կրում են «Ազգային ժողովը», «Կառավարությունը» և «Դատական իշխանությունը» անվանումները: Այսինքն՝ ստացվում է, որ տվյալ պարագայում միմյանց են զուգակցվել պետական իշխանության տարանջատման սկզբունքներն տարբեր երկու՝ ինստիտուցիոնալ և գործառնական հայեցակարգերը, քանի որ Ազգային ժողովը և կառավարությունը ոչ թե պետական իշխանության թևեր են, այլ դրանք իրականացնող պետական իշխանության ինստիտուտներ, իսկ դատական իշխանությունը ոչ թե պետական իշխանության ինստիտուտ է, այլ պետաիշխանական գործառույթ:

Հարկ է նշել, որ խնդրո առարկա հարցի վերաբերյալ մոտեցումները միանշանակ չեն նաև միջազգային սահմանադրական պրակտիկայում: Օրինակ, Լեհաստանի Սահմանադրության 10-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ Լեհաստանի պետական կարգը հիմնվում է օրենսդիր իշխանության, գործադիր իշխանության և դատական իշխանության տարանջատման և հավասարակշռման վրա: Իսկ նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ օրենսդիր իշխանությունն իրականացնում են Սեյմը և Սենատը, գործադիր իշխանությունը՝ Լեհաստանի Հանրապետության նախա-

գահը և Նախարարների խորհուրդը, իսկ դատական իշխանությունը՝ դատարանները և տրիբունալները: Իսկ հիմնական օրենքի համապատասխան գլուխները կրում են «Սեյմը և Սենատը», «Լեհաստանի Հանրապետության նախագահը», «Նախարարների խորհուրդը և կառավարական վարչակազմը», «Դատարանները և տրիբունալները» վերտառությունները: Իսկ Սլովակիայի Սահմանադրության 5-րդ, 6-րդ և 7-րդ գլուխները կրում են համապատասխանաբար «Օրենսդիր իշխանությունը», «Գործադիր իշխանությունը» և «Դատական իշխանությունը» անվանումները, որոնցում սահմանվում են այն իրականացնող մարմինները և ամրագրվում նրանց իրավական կարգավիճակի սահմանադրական հիմունքները: Հանդիպում են նաև վերոնշյալ երկու մոտեցումների զուգակցման դեպքեր: Օրինակ, Ռումինիայի Սահմանադրության «Հանրային իշխանությունները» վերտառությամբ 3-րդ բաժնի 1-ին գլուխը կրում է «Խորհրդարանը», 2-րդ գլուխը՝ «Հանրապետության նախագահը», 3-րդ գլուխը՝ «Կառավարությունը», իսկ 6-րդ գլուխը՝ «Դատական իշխանությունը» վերտառությունները:

Մեր կարծիքով, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ պետական իշխանության համակարգի սահմանման հարցում անհրաժեշտ է որդեգրել մեկ միասնական մոտեցում՝ հիմք ընդունելով իշխանությունների տարանջատման կա՛մ գործառնական, կա՛մ ինստիտուցիոնալ մոտեցումները, և դրան համապատասխան հիշյալ գլուխներն անվանել՝ «Օրենսդիր իշխանությունը», «Գործադիր իշխանությունը» և «Դատական իշխանությունը» կամ «Ազգային ժողովը», «Կառավարությունը» և «Դատարանները»:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ գտնում ենք, որ անկախ պետական իշխանության համակարգի մոդելից, ցանկացած իրավական պետության համար իշխանությունների տարանջատումը և դրանց ներդաշնակ գործակցության ապահովումն անխուսափելի անհրաժեշտություն են, ինչը պետք է կենսագործվի «գործառույթ - ինստիտուտ - իրավասություն» համակարգային ներդաշնակության ապահովման, յուրաքանչյուր սահմանադրական ինստիտուտի համար գործառնական, հակակշռող և զսպող լիազորությունների օպտիմալ հաշվեկշռի ամրագրման, վերջինիս միջոցով՝ դինամիկայում սահմանադրական հավասարակշռության երաշխավոր-

ված պաշտպանման, ժողովրդավարության և իրավունքի գերակայության հիմնարար սահմանադրական սկզբունքների անվերապահ պահպանման և սահմանադրորեն ապահովման շրջանակներում:

Մարտ, 2012թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Кюрис Э.*, Доктрина разделения властей в практике Конституционного суда Литвы // Сравнительное-конституционное обозрение, 2004, N2(47).
2. Конституционный суд как гарант разделения властей: Сборник докладов, М., институт права и публичной политики, 2004.
3. *Հարությունյան Գ.Գ.*, Սահմանադրական վերահսկողություն. լրամշ. հրատ., Եր., Իրավունք, 2008.
4. *Пферсман О.*, Понятие разделения властей и проблема власти во власти // Сравнительное-конституционное обозрение, 2004, N2(47).
5. *Монтескье Ш.Л.*, Избранные произведения, М., Госполитиздат, 1955.
6. *Հարությունյան Գ.Գ.*, Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Եր., Նժար, 2005:
7. *Алебастрова И.А.*, Основы американского конституционализма, М., Юриспруденция, 2001.
8. *Мартышин О.В.*, Конституция Российской Федерации 1993г. как памятник эпохи // Государство и право, 2004, N4.
9. *Енгибарян Р.В.*, Конституционное развитие в современном мире: Основные тенденции, М., Норма, 2007.
10. *Чиркин В.Е.*, Государствоведение: Учебник, М., Юристъ, 1999.
11. *Хессе К.*, Основы конституционного права ФРГ, М., Юрид. литература, 1981.
12. *Vile M.*, Constitutionalism and Separation of Powers.-Oxford University Press, 1967.
13. *Հարությունյան Գ.Գ.*, Սահմանադրությունից՝ սահմանադրականություն, Եր., Նժար, 2004:
14. *Зорькин В.Д.*, Принцип разделения властей в деятельности Конституционного суда РФ // Конституционное правосудие, 2008, 2(40)-3(41) 08.
15. ՀՀ գործող օրենքների ժողովածու (1990-1995թթ.), Եր., 1995:
16. *Ջհանգիրյան Շ.Ն.*, «Իշխանությունների տարանջատում» թե՛ «Իշխանությունների բաժանում» // ՄԴ տեղեկագիր, 4(41) 2006:
17. *Хабриева Т.Я.*, *Чиркин В.Е.*, Теория современной конституции, М., Норма, 2005.
18. *Курис Э.*, Доктрина разделения властей в практике Конституционного Суда Литвы. Конституционный Суд как гарант разделения властей: Сборник докладов, М., Институт права и публичной политики, 2004.

РАЗДЕЛЕНИЕ ВЛАСТЕЙ КАК ОСНОВОПОЛАГАЮЩИЙ КОНСТИТУЦИОННЫЙ ПРИНЦИП ПРАВОВОГО ГОСУДАРСТВА

Баграт Казинян

Резюме

Статья посвящена одной из важнейших проблем современного правового государства – анализу основных положений конституционного принципа разделения и уравнивания властей. Рассмотрев основные тенденции развития данного принципа в условиях современного конституционно-правового развития и сравнив их с внутригосударственной конституционной практикой и конституционно-правовым регулированием данного принципа в Республике Армения, автор выявил ряд важнейших проблем в данной сфере, для разрешения которых выдвинул предложения по изменению и дополнению соответствующих статей Конституции Республики Армения.